ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՔՐԻՍՏԻՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Վարդանյան,

ի պատասխան Ձեր 10.09.2025թ. գրության՝ տեղեկացվում է, որ Երևանի քաղաքապետարանի «ՀայԱրտ» մշակութային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կենտրոն) կողմից 2024թ.-ին մշակված ռազմավարությամբ առաջնայնություն է սահմանվել վերականգնել Կենտրոնի ճարտարապետական, բովանդակային և գաղափարական ամբողջականությունը՝ արդի զարգացումներին համահունչ, ժամանակակից արվեստի տարածման, հանրահռչակման ու զարգացման միակ համայնքային հարթակի գործառույթը լիարժեք իրացնելու համար:

Ըստ այդմ՝ Կենտրոնի գործունեության ռազմավարության համատեքստում անհրաժեշտություն էր առաջացել վերականգնել շենքի ճարտարապետական տրամաբանությունը, մուտքային հստակ կառուցվածքը, ինչպես նաև՝ գործունեության բովանդակային և գաղափարական ամբողջականությունը:

Այս ծրագրի ուղղությամբ իրականացվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ ապամոնտաժվել է շենքի ճարտարապետական դիմագիծը խաթարող ապակեպատ արտաքին սրահը: Ներկայում ընթանում են Կենտրոնի շենքի տանիքի հիմնանորոգման աշխատանքները: Շենքի դիմային հատվածը վերանորոգվել է, ինչը հնարավորություն է ընձեռել լուծելու Կենտրոնի ընթացիկ գործունեության ապահովման հետ կապված խնդիրները: Առաջիկայում ձեռք կբերվի Կենտրոնի շենքի ամբողջական հիմնանորոգման նախագծանախահաշվային փաթեթը և կմեկնարկի Կենտրոնի հիմնանորոգման համալիր ծրագիրը, որի ավարտից հետո, Կենտրոնը հնարավորություն կունենա ներկայանալու հանրությանը որպես ժամանակակից արվեստի նորագույն հարթակ՝ ըստ արժանվույնս կներկայացնի հայկական և համաշխարհային ժամանակակից արվեստի ձեռքբերումները, ինչը հնարավորություն կընձեռի Կենտրոնին դառնալու տարածաշրջանում ժամանակակից արվեստի առաջատար հաստատություններից մեկը:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Էդուարդ Իսաբեկյանի աշխատանքների հավաքման, փաթեթավորման և պահեստավորման աշխատանքներն իրականացվել են համապատասխան կարգով՝ նախապես ստանալով Արամ Իսաբեկյանի թույլտվությունը և Իրինա Իսաբեկյանի անմիջական մասնակցությամբ և ներկայությամբ:

Ի հավելումն վերոգրյալի, տեղեկացվում է, որ կարևորելով հայկական արվեստի տարածման և հանրահռչակման ուղղությամբ իրականացվող ծրագրերն ու միջոցառումները, ինչպես նաև Կենտրոնի հետագա գործունեության հարցում դերակատարների ներգրավվածությունը, Կենտրոնը մշտապես բաց է մասնագիտական քննարկումների և համագործակցության համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ